ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » ապրիլի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-034-28.02.2019-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 21-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 282 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-034-28.02.2019-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ընդունելի համարելով «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթով նախատեսվող ընդհանուր կարգավորումները, միաժամանակ՝ «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագծի վերաբերյալ ստորև ներկայացնում է հետևյալ նկատառումները:

Նախագծի 1-ին հոդվածով «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասում կատարվող փոփոխության 1-ին պարբերության համաձայն՝ յուրաքանչյուր հեռարձակվող հեռուստաթերթով յուրաքանչյուր վիճակախաղի կազմակերպչի գովազդը, այդ թվում՝ նաև որպես հովանավորների հիշատակումը, թույլատրվում է ժամը 21:00-ից մինչև 06:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ռադիոյով՝ ժամը 08:00-ից մինչև 20:00-ն ընկած ժամանակահատվածում, բացի սպորտային միջոցառումների հեռարձակման ժամանակահատվածից, իսկ մանկապատանեկան հաղորդումներին նախորդող և հետևող մեկ ժամվա ընթացքում արգելվում է սույն պարբերությամբ հաստատված գովազդը: Միասնական մոտեցում ցուցաբերելու և հավասար պայմաններ սահմանելու նպատակով՝ առաջարկում ենք.

1) նախագծի 1-ին հոդվածում օգտագործվող «յուրաքանչյուր հեռարձակվող հեռուստաթերթով» և «ռադիոյով» հասկացությունները համապատասխանաբար փոխարինել «հեռուստածրագրով» և «ռադիոծրագրով» հասկացություններով՝ հաշվի առնելով, որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշված հասկացությունների սահմանումները տրված չեն.

2) նույն ժամային սահմանումը կիրառել յուրաքանչյուր հեռարձակվող հեռուստաթերթով և ռադիոյով իրականացվող վիճակախաղերի գովազդների վրա: Միաժամանակ առաջարկում ենք հոդվածում նշված «21:00-ից մինչև 06:00-ն» և «08:00-ից մինչև 20:00-ն» բառերը համապատասխանաբար փոխարինել «24:00-ից մինչև 06:00-ն» բառերով (նշված ժամային

սահմանափակումը ամրագրված է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի սեպտեմբերի 20-ի N 1032- Լ որոշմամբ հավանության արժանացած՝ վերը նշված օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունների 1-ին կետի 2-րդ ենթակետով).

3) նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ վիճակախաղի կազմակերպիչն իրավունք ունի համացանցով գովազդելու վիճակախաղը, գովազդը արգելվում է իրականացնել մանկապատանեկան, կրթական, բժշկական, սոցիալական կայքերի միջոցով, իսկ լրատվական կայքերում սույն պարբերությամբ հաստատված գովազդը չպետք է գերազանցի տվյալ կայքէջի 20%-ից ավելին: Առաջարկում ենք լրատվական կայքերի միջոցով իրականացվող վիճակախաղերի գովազդների նկատմամբ 20% կայքէջի ծավալային սահմանափակման փոխարեն կիրառել նույն՝ վերը նշված ժամային սահմանումը՝ նախատեսելով, որ լրատվական կայքերի միջոցով վիճակախաղերի գովազդները կարող են իրականացվել 24:00-ից մինչև 06:00-ն ընկած ժամանակահատվածում:

4) նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 26-րդ հոդվածում լրացվող 2.2-րդ մասում հստակեցնել, թե որոնք են «նախատեսված խախտումները», քանի որ «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում արդեն իսկ սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինն իրավունք ունի գովազդային օրենսդրության խախտման մասին իր ծանուցագրերի պահանջների կատարումից խուսափելու կամ ժամանակին չկատարելու համար գովազդատու, գովազդ արտադրող, գովազդակիր ձեռնարկությունների ղեկավարների նկատմամբ կիրառել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի մինչև 100-ապատիկի չափով: Բացի դրանից, լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նախագծով առաջարկվող՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով տուգանքի սահմանումը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք 2-րդ հոդվածը խմբագրել՝ հստակեցնելով, թե ինչ խախտումների համար են գովազդատու, գովազդ արտադրող, գովազդակիր ձեռնարկությունների ղեկավարները ենթարկվելու վարչական պատասխանատվության:

Նախագծում օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն և առկա են տեխնիկական վրիպումներ:

1) նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 6-րդ պարբերությունում «Հայաստանի Հանրապետության օրենքներով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենքով» բառերով՝ նկատի ունենալով, որ լիցենզավորման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

2) նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 15-րդ հոդվածի 10-րդ մասի 8-րդ պարբերության համաձայն՝ վիճակախաղերի գովազդ է համարվում վիճակախաղերի կազմակերպիչների կամ նրանց հովանավորների կամ վիճակախաղերի կամ վիճակախաղերի անվանումների կամ վիճակախաղերի ֆիրմային անվանումների (լոգոների) գովազդումը: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալը՝

ա. նախ պարզ չէ և լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն հանգամանքը, թե ինչպես կարող է վիճակախաղերի հովանավորների գովազդը որևէ կերպ սահմանափակվել, մասնավորապես այն դեպքերում, երբ հովանավորի գովազդը որևէ կերպ չի առնչվի վիճակախաղի գովազդի հետ.

բ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 58-րդ հոդվածի համաձայն՝ ֆիրմային անվանումը իրավաբանական անձի անհատականացման միջոց է, մինչդեռ նախագծում խոսքը վիճակախաղերի ֆիրմային անվանումների մասին է: Իսկ «Վիճակախաղերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ վիճակախաղը հրապարակային միջոցառում է, որի ընթացքում կազմակերպիչը մասնակիցների միջև անցկացնում է վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկություն, ընդ որում՝ շահումները կախված չեն նրա գործողություններից և կամքից, այլ բացառապես պատահականության արդյունք են: Բացի դրանից՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «լոգոներ» բառը չի կարող օգտագործվել վիճակախաղերի ֆիրմային անվանումները բնորոշելու համար, քանի որ լոգոտիպը կազմակերպության կամ ապրանքի լրիվ կամ կրճատ անվանման ինքնօրինակ ուրվագիրն է: Այս առումով նախագծի հիշյալ դրույթներն անհրաժեշտ է խմբագրել.

գ. նախագծի 1-ին հոդվածի 3-րդ կետով լրացվող 11.1-ին մասից անհրաժեշտ է հանել «ա» կետը՝ նկատի ունենալով, որ «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով արդեն իսկ սահմանված է, որ արգելվում է անչափահասների կերպարների տեսաձայնային կամ այլ ձևով օգտագործումը գովազդում, եթե այն չի վերաբերում անչափահասների համար նախատեսված ապրանքներին:

21 մարտի 2019 թվականի N 282 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՅՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արմեն Հայրապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (*Պ-034-28.02.2019-ՏՀ-011/0*) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 21
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-034-28.02.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գովազդի մասին» 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածում.

1) 10-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«10. Յուրաքանչյուր հեռարձակվող հեռուստաեթերով յուրաքանչյուր վիճակախաղի կազմակերպչի գովազդը՝ այդ թվում նաեւ որպես հովանավորների հիշատակումը, թույլատրվում է ժամը 21:00-ից մինչեւ 06:00-ն ընկած ժամանակահատվածում, իսկ ռադիոյով ժամը 08:00-ից մինչեւ 20:00-ն ընկած ժամանակահատվածում, բացառությամբ սպորտային միջոցառումների հեռարձակման ժամանակ, իսկ մանկապատանեկան հաղորդումներին նախորդող եւ հետեւող մեկ ժամվա ընթացքում արգելվում է սույն պարբերությամբ հաստատված գովազդը: Այդ ժամանակահատվածում գովազդի ընդհանուր տեւողությունը, այդ թվում՝ գովազդային հաղորդումները եւ գովազդային տեղեկատվությունները վիճակախաղի կամ վիճակախաղի կազմակերպչի մասին, չի կարող գերազանցել 3 րոպեն, իսկ մեկ ժամվա ընթացքում կարող է հեռարձակվել երկու անգամից ոչ ավելի եւ ընդհանուր տեւողությունը չի կարող գերազանցել 60 վայրկյանը:

Խաղարկությունով կամ համակցված վիճակախաղի շահումային ֆոնդի խաղարկության հեռարձակում կարող է իրականացվել լիազոր մարմնի հետ համաձայնեցված վիճակախաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգով սահմանված պարբերականությամբ, ընդ որում այն կարող է հեռարձակվել հեռուստահաղորդմամբ ժամը 23:00-ից մինչեւ 06:00-ն ընկած ժամանակահատվածում եւ դրա ընդհանուր տեւողությունը չի կարող գերազանցել 30 րոպեն:

Վիճակախաղի կազմակերպիչն իրավունք ունի համացանցով գովազդել վիճակախաղը: Սույն պարբերությամբ սահմանված գովազդը արգելվում է իրականացնել մանկապատանեկան, կրթական, բժշկական, սոցիալական կայքերի միջոցով: Իսկ լրատվական կայքերում սույն պարբերությամբ հաստատված գովազդը չպետք է գերազանցի տվյալ կայքէջի 20%-ից ավելին:

Վիճակախաղի կազմակերպիչն իրավունք ունի գովազդել վիճակախաղը մարզադաշտերի կողային վահանակների միջոցով միայն սպորտային իրադարձությունների ընթացքում եւ (կամ) այդ սպորտային իրադարձություններին մասնակցող թիմերի մարզահագուստի վրա:

Տոտալիզատորներ, շահումով խաղեր, ինտերնետ շահումով խաղեր կամ խաղատներ գովազդելիս պետք է տեսանելի լինի +21 նշագրումը, իսկ խաղարկությունով, ոչ խաղարկությունով կամ համակցված վիճակախաղ գովազդելիս՝ +18 նշագրումը:

Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով համապատասխան լիցենզիա չստացած վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կազմակերպիչներն իրավունք

չունեն իրականացնելու համապասխան գործունեության գովազդ Հայաստանի Հանրապետությունում:

Արգելվում է սույն հոդվածում չնախատեսված եղանակով եւ միջոցներով իրականացնել վիճակախաղերի գովազդ:

Սույն հոդվածի իմաստով վիճակախաղերի գովազդ է համարվում վիճակախաղերի կազմակերպիչների կամ նրանց հովանավորների կամ վիճակախաղերի կամ վիճակախաղերի անվանումների կամ վիճակախաղի ֆիրմային անվանումների (լոգոների) գովազդումը.

2) 11-րդ մասում «միջոցների» բառերից հետո լրացնել «կամ անչափահասների կերպարների» բառերը:

3) Լրացնել նոր 11.1-րդ, 11.2-րդ մասեր՝

«11.1 Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատների գովազդի ժամանակ արգելվում է՝

ա) որեւէ կերպ դիմել անչափահասներին.

բ) տպավորություն ստեղծել, թե խաղին մասնակցելն ապահովում է պարբերաբար եկամուտ (շահույթ) ստանալու հնարավորությունը կամ աշխատանքի այլընտրանք է.

գ) տպավորություն ստեղծել, թե եկամուտ (շահույթ) ստանալը երաշխավորված է.

դ) ներշնչել, որ խաղի միջոցով հնարավոր է հասնել հասարակական, մասնագիտական, սպորտային հաջողության.

ե) քննադատել վիճակախաղին կամ ինտերնետ շահումով խաղին չմասնակցելը.

11.2 Վիճակախաղի, շահումով խաղի, ինտերնետ շահումով խաղի կամ խաղատների գովազդը պետք է պարունակի ոչ սթափ կամ հոգեճնշող վիճակում խաղալու անթույլատրելիության վերաբերյալ նախազգուշացնող տեղեկատվություն:».

4) 12-րդ մասը «շահումով խաղի» բառերից հետո լրացնել «ինտերնետ շահումով խաղի,» բառերով»:

5) 15-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«Արգելվում է շահումով խաղի կամ ինտերնետ շահումով խաղի կամ խաղատան կամ խաղասրահի կամ դրանց կազմակերպիչների ցանկացած տեսակի գովազդը, այդ թվում՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ համացանցով, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ խաղատների կամ շահումով խաղերի շենքերի, շինությունների կամ սրահների մեջ կամ վրա, Հայաստանի Հանրապետության սահմանային մուտքի կետերում, ինչպես նաեւ առնվազն չորսաստղանի կարգին համապատասխան որակավորման պահանջներին եւ չափանիշներին համապատասխան հյուրանոցներում տեղադրվողների:

Հոդված 2. Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել նոր 2.2.-րդ մասով.

«2.2.) Գովազդատու, գովազդ արտադրող, գովազդակիր ձեռնարկությունների ղեկավարները նախատեսված խախտումների համար կրում են վարչական պատասխանատվություն: Այդ դեպքում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը նրանց նկատմամբ կիրառում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-034[1]-28.02.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի «ժգ» կետում «հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, բացառությամբ» բառերը փոխարինել «հեռուստատեսությամբ կամ ռադիոյով կամ համացանցով, բացառությամբ իր պաշտոնական կայքի կամ» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՎԱԶԴԻ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հասարակության լայն շերտ կամա թե ակամա շփվում է հեռուստատեսությամբ, ռադիոյով, համացանցով եւ արտաքին գովազդով տարածվող նյութի հետ՝ առանց տարիքային սահմանափակման: Գովազդվող ապրանքների եւ ծառայությունների շարքում հանդիպում է նաեւ շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի, խաղատների, վիճակախաղերի կազմակերպիչների ծառայությունների գովազդ, որը հասանելի է տարիքային բոլոր խմբերի համար, օրվա ցանկացած ժամի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Գովազդի մասին», «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին», ինչպես նաեւ «Վիճակախաղի մասին» ՀՀ օրենքները թերի են կարգավորման գործունեության վերոգրյալ տեսակների իրավահարաբերությունները, ինչպես նաեւ հնարավորություն են ընձեռում հասարակության լայն խմբերի ցերեկային ժամերին դիտելու նշված ծառայությունների գովազդը, ուստի անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել կազմակերպիչների կողմից գովազդի տեղադրման պայմանները:

Օրենքների փոփոխությունների նախագծերով առաջարկվում է սահմանափակել վերը նշված գործունեությամբ զբաղվող ընկերությունների կողմից առաջարկվող ծառայությունների գովազդը, հասարակության խոցելի խմբերին զերծ պահելու դրանց ազդեցությունից: